№ 168 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2 1901 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2 № 168

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ազգ օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այդ էր պակաս.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գանձակի գաւառից. Նամակ Պետերբուրգից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գերմանիայից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պետրոս Դուրեան.

ԱՅԴ ԷՐ ՊԱԿԱՍ

—

Ըստ երևոյթին արդարանում են այն լուրերը, որ պատում էին մեր թեմական դպրոցների տեսչական պաշտօնավարութեան մասին: Մեզ հասած տեղեկութիւններից երևում է, որ Էջմիածինը դիտաւորութիւն ունի տեսչական պաշտօնը դարձնել հոգևորականների մենաշնորհութիւն և թոյլ չը տալ, որ ընտրվեն այդ պաշտօնի համար աշխարհական անձեր:

Եթէ ճիշդ են այդ լուրերը, այդ նշանակում է, որ մենք կանգնած ենք մի տարօրինակ երևոյթի առաջ: Բոլոր այն անաջող փորձերից յետոյ, որ ցոյց տուին մեր հոգևորական տեսուչները, բոլոր այն երկպառակութիւններից յետոյ, որոնք ծագեցին նրանց տեսչութեան առիթով, վերցնել և պարտաւորեցուցիչ դարձնել տեսչի հոգևորական լինելը՝ նշանակում է չը մտածել կրթութեան նպատակների մասին, այլ աչքի առաջ ունենալ ուրիշ նկատումներ:

Շուշու և Երևանի դպրոցները փորձեցին հոգևորական տեսուչներ ունենալ և մենք տեսանք հետևանքը: Միայն Ներսիսեան դպրոցն էր մնացել ազատ այդ բաղդից և կանոնաւոր ու հանգիստ առաջ էր տանում իր գործերը: Մենք մի քանի տարիներից ի վեր լսում էինք մի շարք պատուելիներ՝ նախ թէ պէտք է տեսուչ նշանակեն Սեդրակ Մանդինեանին, յետոյ թէ այդ պաշտօնի համար աչքի առաջ ունեն Կարապետ Կոստանեանին: Տալիս էին և ուրիշ անձանց անուններ: Հոգաբարձութիւնը կարողացաւ իր իրաւունքները պաշտպանել, տեսչի ընտրութիւնը իր ձեռքում պահել և իր վստահութիւնը վայելող տեսչի միջոցով դպրոցը կառավարել, առանց ներքին դպրոցական ցնցումների և երկպառակութիւնների: Այժմ, երբ որոշ անձանց թեկնածութիւնը այլևս աջողութիւն չունի, հանդէս է գալիս նոր սպառնալիք, որ յաւակնութիւն ունի սկզբունքի բնաւորութիւն կրել իր վրա: Այն է՝ թէ հոգևոր դպրոցի տեսուչը պէտք է լինի հոգևորական:

Բայց մենք զարմանում ենք մի բանի վրա: Մեր մէջ, ինչպէս յայտնի է, թէ քահանաների ձեռնադրութիւնը, թէ կաթողիկոսի ընտրութիւնը, թէ դպրոցների պահպանութիւնը և թէ առհասարակ բոլոր հասարակական գործառնութիւնները գտնվում են ժողովրդի ձեռքում: Եթէ գոյութիւն ունեն և պահպանվում են հոգևոր հիմնարկութիւններ և պաշտօնեաներ՝ միայն շնորհիւ ժողովրդի, որ նրանց ուզում է պահպանել: Այն մենաշնորհ և բացառիկ դիրքը, որ ձգտում է հաստատել մեր հոգևոր իշխանութիւնը, թուլացնում է ժողովրդի համակրութիւնը դէպի հոգևորականութիւնը և դէպի այն հիմնարկութիւնները, որոնք անկօնտրոլ կերպով գտնվում են հոգևորականութեան ձեռքին: Օրինակ քահանաների մուտք գործելը թեմական դպրոցի հոգաբարձութեան մէջ ամենալաւ ապացոյց կարող է լինել մեր ասածների: Քահանաների մասնակցութիւնը ոչ մի բարերար հետևանք չունեցաւ, իսկ ժողովրդի մէջ մեծ տհաճութիւն առաջ բերեց և սառնութիւն գցեց դէպի դպրոցական գործը: Այժմ աւելանում է տեսչի հեգևորական լինելու սպառնալիքը: Մի թէ ժողովրդի ներկայացուցիչները իրանք չեն ճանաչում մեր հոգևորականներին և իրանք չէին հրաւիրի նրանց, եթէ յարմար դատէին: Առանց այն էլ մի քանի տեղ, ինչպէս Շուշի, իրանք հոգաբարձուներն են հրաւիրում հոգևորականների տեսչութեան պաշտօնի համար:

Փոխանակ տեսչական պաշտօնի վերաբերութեամբ այդպիսի պարտաւորութիւն ստեղծելու՝ աւելի նպատակայարմար և խելացի կը լինէր, որ դուք պատրաստէիք կրթված և լուսամիտ հոգևորականներ. այն ժամանակ իրանք հոգաբարձուները նրանց կընտրէին, իբրև արժանաւորների, առանց ստիպողական միջոցների և սպառնալիքների ձնշման:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻ ԳԱՒԱՌԻՑ

—

Բանանց գիւղ, յուլիսի 9-ին

Մտէք մեր գաւառի հայ գիւղերից որ եւ է մինը եւ ձեր առաջ միշտ նոյն ցաւալի իրականութիւնը կը ներկայանայ—անտեսական կեանքի անկում, փողի պակասութիւն, ապրուստի անբարեբաղդութիւն: Չէք կարող հարց ու փորձ անել գիւղի մտաւոր կեանքի, ժողովրդի ընթերցանութեան, ուսումնարանների որպիսութեան, գրադարանի գոյութեան մասին: Այսպիսի հարցեր ինքն ըստ ինքեան մոռացվում են, երբ տեսնում էք՝ թէ ինչպէս մերկ, ոտաբոբիկ, քաղցած երեխաներ թաւալվում են փողոցի աղբերի մէջ, երբ տեսնում էք՝ թէ ինչպէս 80 կոպէկ ձեռք բերելու համար գիւղացին իր ձին վարձով տալիս է, իսկ ինքը մոռանալով յոգնածութիւնը, նախորդ գիշերի անքնութիւնը, յանձն է առնում ամբողջ 30 վերստ ոտով անցնել բարձր սարերի, դժուար դարիվայրերի եւ խոր-խոր ձորերի վրայով՝ տարվայ ամենաշոգ օրերին:

Բանանցումն ենք: Ես տրամադրված էի կարծել, թէ այս գիւղի հասարակութիւնը պէտք է անհամեմատ աւելի բարեկեցիկ լինի, որովհետեւ իր միջից հանել է համալսարանաւարտ բժիշկ, իրաւաբան, ինժենէր եւ բաւական թւով միջնակարգ կրթութեան տէր մարդիկ, ինտելիգենտների մի խումբ, ուրեմն, որոնք, եթէ ցանկանային, կարող էին մեծ օգուտներ տալ իրանց հայրենի գիւղին, գոյութեան կռիւ մէջ նպաստել այն հասարակութեան, որի մէջ ծնվել, ապրել, մեծացել են:

Բանանցը, շարունակ չփվելով քաղաքի հետ, յաճախ իր մէջ տեսնելով կրթված պարոնների նիստ ու կացը՝ փոխում է իր պահանջները՝ քչից դէպի շատը գնալով, փոխում է կեանքի եղանակը՝ պարիզից դէպի բարդը դիմելով: Մի կողմից մտնում է լաւ հագնվելու, տունը ճաշակով կահաւորելու սովորութիւնը, պահանջը, միւս կողմից աւելի ծանրանում են հարկերը. քչանում-ուժասպառվում է հողը: Մէջ տեղը գոյանում է մի անդունդ, որ կոչվում է տնտեսական կեանքի խորտակում, առաջանում է մի անջրպետ, որը լցնելու, նորոգելու համար հարկաւորվում են նոր միջոցներ, նոր հնարներ, նոր ոյժեր: Քաղաքակրթութիւնը գիւղացու համար չարիք կը լինի այն ժամանակ, երբ սա ընդունելով նրա պահանջները՝ անփոփոխ թողնէ ապրուստի նախկին աղբիւրները:

Կուլտուրան բարիք չի տայ գիւղի հասարակութեան, եթէ սա չը մտածէ նոր-նոր ձեռնարկութիւններով նրա ստեղծած կեանքի բարդ պայմաններին բաւականութիւն տալ: Շատ բաներ, որոնց վրա առաջներում բանանցեցին բոլորովին ուշք չէր դարձնում, այժմ պիտի նրա ապրուստի, եթէ ոչ անհրաժեշտ, գլխաւոր, գոնէ երկրորդական աղբիւրներից լինեն:

Հաւերին խնամել-պահելը տղամարդու կողմից միանգամայն ամօթ, ծիծաղելի բան է համարվում: Մինչդեռ հաւապահութիւնը գիւղում շատ հեշտութիւն է ներկայացնում: Նրանց կերակրելու համար առանձին ծախսեր չը պիտի անեն. որքան ուզեն, կարող են պահել: Պրտղատու ծառերի վրա եւս բոլորովին ուշք չեն դարձնում: Եթէ որոշ խնամք եւ հոգս էլ սրանց վրա տանեն՝ կարող են սրանից էլ բաւականաչափ օգտվել: Բանջարեղէնների վրա նոյնպէս քիչ խնամատարութիւն կայ. այնքան չեն ստանում, որ գոնէ իրանց տարեկան պէտքերին գոհացում տան:

Այսպիսի եւ սրանց նման մանր արդիւնքներն են, միանալով իրար հետ, մեծ ամբողջութիւն կազմում: Բանանցեցու ապրուստի գլխաւոր աղբիւրներն են՝ հողագործութիւնը, անասնապահութիւնը, այգեգործութիւնը եւ մեղուաբուծութիւնը: Բայց որովհետեւ այս խոշոր ճիւղերն էլ ցանկալի չափով չեն զարգացած, այդ պատճառով եւ սրանցով չեն սահմանափակվում նրա պարապմունքները: Հողագործութիւնը, մանաւանդ վերջին տարիները միմեանց յաջորդող վատ եղանակների պատճառով, չէ տալիս գոնէ տարվայ հացը: Անասնապահութիւնն էլ քիչ է զարգացած. մածնի, ոչնչականութիւն. ինչքան բանաստեղծը ինքնազնին է դառնում, այնքան էլ երբեմն հարստանում, փարթամանում է նրա ոգին, զգացմունքների աշխարհը—այնպէս որ՝ վերջապէս ինքը բանաստեղծը դառնում է իր համար իբրեւ ամենամեծ առեղծուած. նա սկսում է իր զգացմունքների կամ, աւելի ճիշդ ասած, զգայութիւնների յորձանքում կամովին լողալ եւ նրանց վրա խորհրդածել: Ահա «եսի» այս ինքնապատկերացումը, երկուութիւնն է այն հոգեկան առանձնայատկութեան աղբիւրը, որին ընդունված է «սանտիմէնտալ» անուն տալ:

Մեր նպատակից դուրս է այստեղ բոմանտիք բանաստեղծութեան մանրամասն վերլուծումով զբաղվել, բայց հարկադրված ենք նրա մի քանի ուրիշ հիմնական գծերն էլ մատնանիշ անել: Բոմանտիք բանաստեղծի համար կեանքը եւ արուեստը միանգամայն նոյնանիշ գաղափարներ են: Նովալիսի կարծիքով, նոյն իսկ բանաստեղծութիւնն է բացարձակ իրականը. «Որքան բանաստեղծական, այնքան ճշմարիտ... մենք կարող ենք բնութիւնը միայն բանաստեղծելով ըմբռնել»: Սրանով է բացատրվում նրանց սէրը դէպի դիցաբանութիւնը եւ առհասարակ առասպելախառն բանաստեղծութիւնը. հէքիաթը նրանց համար «արթուն ժամանակ կազմված մի երազ է»: Նրանց կարծիքով, «եսի» զգացմունքի յայտնութեամբ հնարաւոր էր ոչ միայն տիեզերքը ճանաչել եւ ըմբռնել—մի միտք, որ ամենածայրայեղ հետեւողականութեամբ եւ սիստեմատիք կերպով առաջ տարաւ այդ դպրոցի նշանաւոր փիլիսոփան՝ Ֆիխտէն—այլ եւ, ինչպէս աջող կերպով նկատում է Ստէֆենս, «բոմանտիք բանաստեղծի համար կեանքը նոյնն է, ինչ որ գործը գոյների միութիւն առաջացնել, այն ինչ բոմանտիքական բանաստեղծութեան ձգտման կէտն է ներհակութիւն, գոյների եւ պատկերների խիստ հակասութիւն: Այս է պատճառը, որ նա յայտնապէս խոստովանում է. «Բանաստեղծի (այսինքն բոմանտիք բանաստեղծի) կամայականութիւնը ոչ մի օրէնք չէ կարող տանել». քնական է, որ այս տեսակ բանաստեղծութիւնից կարող էր միայն քաոս առաջանալ. եւ յիրաւի, Շլէգելի կարծիքով, բոմանտիք բանաստեղծութեան իդէալը «բարձրագոյն ներդաշնակութիւնների» եւ «օտարոտի հաճոյքների» քաոս ստեղծելն է—մի «կախարդիչ խառնափնթորութիւն»:

Նոյն դպրոցի ամենամեծ քնարերգակը՝ Նովալիս, նկատում է. «Բոմանտիք բանաստեղծութիւնը այն արուեստն է, որ մի հաճելի եղանակով առարկաները, երեւոյթները օտարացնում, խորթացնում է, բայց մի եւ նոյն ժամանակ ծանօթ եւ գրաւիչ է դարձնում». հասարակին մի բարձրագոյն իմաստ տալ, սովորականին՝ մի խորհրդաւոր երեւոյթ, ծանօթին անծանօթի տեսք, վերջնականին՝ անվերջի գոյն տալ—ահա, նրա կարծիքով, բոմանտիք բանաստեղծի գաղտնիքը:

Վերոյիշեալ հակադրութեան վրա մատնացոյց է անում եւ Շիլլերը՝ միայն տարբեր տերմիններ գործածելով՝ «naiv» եւ «sentimental»—ինչպէս եւ ուրիշները գործ են ածել «antique» եւ «modern» բառերը եւ այլն. արտայայտութիւնները թէեւ տարբեր են, բայց դրանցով մկրտվում են մի եւ նոյն բանաստեղծական երկու խոշոր դպրոցները:

«Նոր», բոմանտիք բանաստեղծութիւնը անսանձ անհատականութիւն է, բանաստեղծական

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

(Ծննդեան յիսնամեակի առիթով)

III

Դուրեանի քնարը, ինչպէս առհասարակ ամեն մի բուն քնարերգակի լարը, երեք մօտիվներ է հնչեցնում—սիրոյ, բնութեան, վշտի եւ մասամբ բողոքի երգեր: Այս երգերը, թէեւ թւով նուազ, մեր քնարերգական բանաստեղծութեան ամենափայլուն գոհարներն են կազմում: Իր այս երգերում մեր վաղամեռիկ բանաստեղծը երբէք չէ նմանում այն «թիսող» բանաստեղծներին, որոնց գերմանացի նշանաւոր քննադատ Ֆր. Շլէգել «անբանաստեղծ բանաստեղծ» է անուանում եւ որոնց թիւը մեր բանաստեղծական գրականութեան չոր դաշտում տարաբաղդաբար հետզհետէ ատուարանում է: Նա մի քնարերգակ է՝ բառի իսկական նշանակութեամբ—թէ իր ճարտար արուեստով, սահուն, անբռնազբօսիկ լեզուով, որի երաժշտականութիւնը եւ հնչունութիւնը երբեմն մի դիւթական մէլոդիայի ալիքների է նմանում—եւ թէ բանաստեղծական աւիւնով, զգացմունքի խորութեամբ, տրամադրութեան՝ վայրկենական ապաւորութիւնների զեղուն եւ պատկերաւոր արտայայտութեամբ:

Այս արտայայտութիւնները երբեմն աւելի հեշտ է զգալ, քան թէ տրամաբանօրէն հասկանալ, որովհետեւ դրանց հետ կապված պատկերները՝ իբրեւ վայրկենական տրամադրութեան խորհրդանշաններ՝ (symbol) ինքը հեղինակը աւելի շատ զգում է քան թէ մտածում: Այս յատկութեան շնորհիւ Դուրեանի էջերից, եթէ կարելի է ասել, մի կախարդական կուսութիւն է բուրում, բայց մի կուսութիւն, որ գինովութեան արգանդից է ծնում: Սակայն բանաստեղծական գինովութեան բմպելին «սատանայի գինին» չէ, ինչպէս ասում էր Միլտոն, այլ «աստուածային գինին». չէ՞ որ հին յոյներն էլ սիրում էին «երկնային ցողով»—նեկտարով գինովցած մուզաների ներշնչումները—այնպիսի ստեղծագործութիւններ, որոնցից «հոգու ծաղիկների» անուշահոտ բոյրն էր ափվում մըշտապէս:

Եթէ մի բովանդակալից, ամփոփ խօսքով կամենայինք բնորոշել Դուրեանին, իբրեւ քնարերգակի, կանուանէինք նրան բոմանտիք բանաստեղծ. բայց ինչ է բոմանտիքական բանաստեղծութիւնը:

Ժան Պաուլ շատ աջող կերպով յոյն-կլասիքպլաստիքական բանաստեղծութիւնը, իր օբեկտիվ առանձնայատկութեամբ, իր իդէալական պարզութեամբ, իր բարոյական-գեղեցկի կախարդանքով՝ դնում է իբրեւ հակապատկեր զուտ նկարչական, երաժշտական բոմանտիք բանաստեղծութեան. «պլաստիքական արուեստը (կլասիք բանաստեղծութիւնը) փայլում է մի օրինակ, ինչպէս սթափ արթնութիւնը, բոմանտիքական լուսինը տատանվում է փոփոխակի, ինչպէս երազը»,—ասում է նա: Բոմանտիքական դպրոցի ամենամեծ քննադատը՝ Ֆր. Շլէգել նոյնպէս մատնացոյց է անում այս հակադրութիւնը. կլասիքական բանաստեղծութեան նպատակն է անհաւասար տարրերը չէզոքացնել, զգացմունքների ներդաշնակութիւն, ոճի եւ գոյների միութիւն առաջացնել, այն ինչ բոմանտիքական բանաստեղծութեան ձգտման կէտն է ներհակութիւն, գոյների եւ պատկերների խիստ հակասութիւն: Այս է պատճառը, որ նա յայտնապէս խոստովանում է. «Բանաստեղծի (այսինքն բոմանտիք բանաստեղծի) կամայականութիւնը ոչ մի օրէնք չէ կարող տանել». քնական է, որ այս տեսակ բանաստեղծութիւնից կարող էր միայն քաոս առաջանալ. եւ յիրաւի, Շլէգելի կարծիքով, բոմանտիք բանաստեղծութեան իդէալը «բարձրագոյն ներդաշնակութիւնների» եւ «օտարոտի հաճոյքների» քաոս ստեղծելն է—մի «կախարդիչ խառնափնթորութիւն»:

Նոյն դպրոցի ամենամեծ քնարերգակը՝ Նովալիս, նկատում է. «Բոմանտիք բանաստեղծութիւնը այն արուեստն է, որ մի հաճելի եղանակով առարկաները, երեւոյթները օտարացնում, խորթացնում է, բայց մի եւ նոյն ժամանակ ծանօթ եւ գրաւիչ է դարձնում». հասարակին մի բարձրագոյն իմաստ տալ, սովորականին՝ մի խորհրդաւոր երեւոյթ, ծանօթին անծանօթի տեսք, վերջնականին՝ անվերջի գոյն տալ—ահա, նրա կարծիքով, բոմանտիք բանաստեղծի գաղտնիքը:

Վերոյիշեալ հակադրութեան վրա մատնացոյց է անում եւ Շիլլերը՝ միայն տարբեր տերմիններ գործածելով՝ «naiv» եւ «sentimental»—ինչպէս եւ ուրիշները գործ են ածել «antique» եւ «modern» բառերը եւ այլն. արտայայտութիւնները թէեւ տարբեր են, բայց դրանցով մկրտվում են մի եւ նոյն բանաստեղծական երկու խոշոր դպրոցները:

«Նոր», բոմանտիք բանաստեղծութիւնը անսանձ անհատականութիւն է, բանաստեղծական

կաթի կարօտ տներ գիւղում փոքր % չեն կազմում։ Այգեգործութիւնը տանը խմած գինիից մի քիչ աւելի կը տայ. մեղուապահութիւնը այնքան, որքան հարկաւոր է ազիզ օրերին մեղր ունենալու համար։ Ծայրը ծայրին հասցնելու համար ստիպված են լինում ժամկութիւն եւ այլ պարապմունքներ յանձ առնել։

Գիւղը, որի բնակիչները, ի դէպ պիտի ասել, աշխատասէր, տոկուն եւ խելօք մարդիկ են, ընդհանրապէս այս վիճակի մէջ է։ Պիտի երեւակայել միւս գիւղերի դրութիւնը։ Նոր-նոր ձեռնարկութիւնները, գիտութեան ցոյց տուած միջոցները միայն կարող են օգնել գիւղացուն ներկայ դառն հանգամանքների մէջ։ Այս պատճառով ահա ուրախութեամբ պիտի արձանագրենք, որ այդպիսի նորութիւններ արդէն սկսվել են գիւղում մի քանի անհատների ձեռնարկութեամբ։ Բանանցում կայ մի երիտասարդ, Յովհաննէս Յովհաննիսեան, որ եռանդուն կերպով պարապում է մեղուաբուծութեամբ։ Ունի մօտաւորապէս 60 փեթակ, որոնք բոլորն էլ շրջանակաւոր են եւ շինված են ամերիկեան սիստէմով։ Ամեն մի փեթակի մէջ կան մօտ 16 քառակուսի, որոնցից իւրաքանչիւրը տեղաւորում է 4—5 ֆունտ մեղր լաւ տարիներում։ Այս ձեւի փեթակները դժուար չէ շինել. ամեն մի մեղուապահ իրան համար կարող է պատրաստել։ Մեղուների համար Բանանցի շրջակաները բաւական յարմար վայրեր են ներկայացնում։ Մեղրը ծախվում է Գանձակում—պուդը 10—12 ռուբլով։ Այս փորձը, որ բաւական ցանկալի հետեւանքներ է տուել ձեռնարկողին, պէտք է օրինակ ծառայէ գիւղացիների համար։ 4—5 հոգի միայն արդէն սկսել են մեղու պահել յիշած սիստէմով, որ համեմատած տեղականի հետ մեծ առաւելութիւն է ներկայացնում։ 10 փեթակ պահողը, ստանալով իւրաքանչիւրից 2 պուդ՝ ամբողջից կստանայ 20 պուդ մեղր, որի վաճառումից տարեկան 200 ռուբլի արդիւնք կարող է ունենալ, մի գումար, որը գիւղացու ապրուստի գլխաւոր աղբիւրներից մէկը կը լինի։

Նորութիւններից է նաեւ օղեգործութիւնը, որով առ այժմ պարապում են մի քանի մարդիկ։ Օղին պատրաստում են խաղողի ջեջից եւ թթից։ Վեդրօն ծախվում է 7 ռուբլով, որից 4 ռուբլին գնում է ակցիզի եւ միւս բոլոր ծախսերի վրա։ Զուտ աշխատանք վեդրօի մէջ մնում է 3 ռուբլի։ 50 վեդրօ պատրաստողը տարեկան ունենում է 150 ռուբլի, շատ անգամ եւ աւելի։ Սա էլ ապրուստի գլխաւոր աղբիւրներից է։ Գինեգործութիւնը թոյլ է զարգացած չնորհիւ այն հանգամանքի, որ գիւղացիները չեն կարողանում խնամել այդիների վազերը։ Վերջերս մի նորութիւն էլ այդ ճիւղի վերաբերմամբ է մտել։ Հիւանդութիւնների դէմ սկսել են գործ ածել ծծումբ եւ այլ դեղեր, որոնք մինչեւ հիմա չը կային։ Այս հանգամանքն էլ որոշ չափով բարձրացրել է տընտեսութիւնը։

Այսպէս ուրեմն նրանք, որոնք նոր-նոր ձեռնարկութիւններով զարգացնում են տնտեսութիւնը, նոր միջոցներով լայնացնում, նորոգում են հին պարապմունքները՝ կարողանում են գոյութեան կուի մէջ գլուխ հանել, արդար վաստակով, սեփական քրտինքով, առանց ուրիշին կեղեքելու, առանց ուրիշին ծծելու պարել, առաջ գնալ։ Նոր ժամանակվայ համար հարկաւոր է նոր զէնք, նոր պայմանների համար հարկաւոր է նոր միջոց։

Սիմ. Յակոբեանց

ՆԱՄԱԿ ՊԵԱՏԻԳՕՐՍԿԻՑ

—

Յուլիսի 30-ին

Երէկ, յուլիսի 29-ին, Պեատիգօրսկի եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց Գր. Զանչեանի յիշատակին։ Կային բազմաթիւ օտարազգիներ, իսկ հայ ինտելիգէնցիան մեծ մասամբ փայլում էր իր բացակայութեամբ...

Պատարագի միջոցին Գէորգ քահանայ Մըկըրտումեան շատ գեղեցիկ կերպով բացատրեց Գր. Զանչեանի գործունէութիւնը թէ իբր ոուս գրականութեան աչքի ընկնող ոյժերից մէկի եւ թէ իբր «Եղբայրական օգնութեան» հրատարակող՝ ազգի անմոռանալի բարերարի։ Տէր հօր խօսքերը, լի խորին համոզմունքով եւ արտի խորքից բղխող ազդու շեշտերով, մեծ տպաւորութիւն թողեցին ներկայ գանվողների վրա։

Եւ իսկապէս Զանչեան հրապարակում երեւացող սովորական գործիչներից չէր. նա չէր կանչում թմբկահարներ իր գործունէութիւնը փառաւորելու. նա ձայն անգամ չէր հանում իր մասին, անչափ համեստ էր նա համեմատելով իր կատարած մեծ գործի հետ։ Սրբուհի Գալֆայեանից յետոյ (հիմնադիր Կ. Գալֆայեան որբանոցի) XIX դարի երկրորդ խոշոր անձնուէր բարերարն էր, որ իր անձնազոհութիւնը մէջ տեղ դնելով, առանց ոչնչի, տասնեակ հազարներ հաւաքեց տասից աւելի որբանոցների համար։ Սրբուհին մի տգէտ կին էր, խաւար օրերում, որ յօժարակամ սեւ զգեցաւ եւ անտես առնելով իր հրապուրիչ գեղեցկութիւնը, ձեռք մեկնեց հարուստներին՝ մի պատառ հաց մուրալով իր հովանու տակ առած տասնեակ որբերին։ Քաղաքակրթութեան ջահով լուսաւորած հրապարակ եկաւ Գր. Զանչեան՝ իբրեւ ամօքիչ այն աննկարագրելի թշուառութեան՝ որին ենթարկված էին անթիւ որբեր, որոնց ծնողք զոհված էին բարբարոսութեան։ Նա միայնակ չլուխ կանգնեց մի հսկայ գործի, իրան աջակից ունենալով միայն մի խումբ ազնիւ եւ մարդասէր սրտեր, եւ արեց այն՝ ինչ հարիւրաւորներ չը պիտի կարողանային անել։

IV

Դուրեանին մենք բամանտիք բանաստեղծ անուանեցինք։ Փորձենք այժմ առանձնապէս կանգ առնել նրա քնարի վերոյիշեալ երեք տարբեր հնչիւնների վրա եւ թիւրիմացութեան տեղիք չը տալու համար՝ աշխատենք համեմատական եզանակով պարզել, թէ նա որքան կարող է եւրոպական բամանտիք բանաստեղծների հետ զուգորդուել։

Նա գլխաւորապէս ֆրանսիական բամանտիք գրականութեան ազդեցութեանն է ենթարկված. ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, որովհետեւ ֆրանսիական բամանտիզմը, որից պօլսահայ գրականութիւնը դեռ մինչեւ այժմ էլ չէ դադարում անյագ կերպով հոտոտել, Դուրեանի պատանեկական հասակում իր դիւթական բոյրի ալիքներով դեռ նոր էր վարակել Բօսֆորի ափերը։ Լամարթինը Դուրեանի սիրելի բանաստեղծն էր, որի ազդեցութիւնը նորակազմ պատանու վրա շատ ուժեղ հետքեր է թողել. այնուհետեւ կարող է Վ. Հիւգօի եւ գուցէ Ա. Միւսէի մասին խօսք լինել՝ իբրեւ ազդեցիկ հեղինակների։

Բացի այս արտաքին հանգամանքից, օտար դրդումներից, ազդեցութիւնից, ի նկատի պէտք է ունենալ, որ Դուրեանը բամանտիքական մի քանի ուժեղ հակումների սաղմը հէնց իր մէջն էր կրում—սէր դէպի բանաստեղծական արուեստը եւ մանաւանդ դէպի երաժշտութիւնը. բացի դրանից «սէրը» աստուածացնելու, նրան միստիկ կերպարանք տալու յատկութիւնը։ Նա իր նամակներից մէկում շատ հաւեստ կերպով նկատում է. «Բանաստեղծ չեմ, սակայն բանաստեղծութիւնը կը սիրեմ». իսկ մի ուրիշ տեղ երգի, երաժշտութեան անունով հիացնկարչի, հնչիւնը երաժշտի համար». եւ ահա նրանք իրանց ինքնիշխան դերում մի անսանձ կամայականութեամբ խաղում էին այդ «ստորադրեալի»—կեանքի հետ։

Կեանքը նրանց համար կարճ էր, իսկ զգացմունքը յաւիտենական։ Նովալիսն ասում էր, որ «մտածմունքը զգացմունքի երազն է, մի մեռած զգացմունք, մի թոյլ կեանք»։ Այս նրկարչային յատկութիւնը, այս զգայնութիւնն էր պատճառ, որ երաժշտութիւնը նրանց նոյնքան սիրելի էր, որքան դիցաբանութիւնը։ Վաքէնրոդէրի կարծիքով, «երաժշտութիւնը այն արուեստն է, որ մեզ զգացմունքը զգալ է տալիս»։ Արուեստի եւ երաժշտութեան աշխարհը «հաւատքի աշխարհ» էր բամանտիքների համար։ Արուեստի պաշտամունքը եւ բնութեան ու կեանքի գերիդէալական բանաստեղծացումը—ահա բամանտիք դպրոցի երկու բնորոշ յատկութիւնները. այս յատկութիւններին՝ բնական հետեւողութեամբ՝ միանում է եւ մի երրորդ տարր—բամանտիք բանաստեղծութեան ամենահիմնական կորիզը—կարօտի զգացմունքը։ Բամանտիքական բանաստեղծութիւնը՝ կարելի է ասել՝ ըստ էութեան կարօտի բանաստեղծութիւն է. կարօտ դէպի անվերջը, դէպի յաւիտենականը, դէպի այն առասպելական գաղտնիքը, որի անունն է «Սպիտակ օձ», «Կապոյտ ծաղիկ»։ Այս «Կապոյտ ծաղիկը» շատ լաւ բնորոշում է Շպիլհագէն իր վէպերից մէկում—դա այն ծաղիկն է, որին ոչ ոք չէ տեսել, բայց որի հոտովը լի է ամբողջ աշխարհը. սէրն է այդ «կապոյտ ծաղիկի» բոյրը. եւ բնութեան գաղտնիքը ուրիշ բան չէ, բայց եթէ «սիրող սրտի կատարված կարօտը» (Նովալիս)։

—

մունքի մի օրհներգ է կարդում։ Նուրբ, նուագային երաժշտութիւնը ի հարկէ նրան վիճակված չէր վայելել, բայց նա սիրում էր ամենատարրական եւ սկզբնական երաժշտութիւնը—երգը. հոգեզմայլ ոգեւորութեան բոպէներին նա շատ անգամ գրիչը մի կողմը դրած՝ երգով էր արտայայտում իր կրակոտ սրտի թրթռումները։

Դուրեանի քնարի սիրոյ հնչիւններին ականջ դնելիս՝ ընթերցողը մի բնական հետաքրքրութեամբ հարց է տալիս—արդեօք այդ երգերի հեղինակը ունեցել է իր կեանքում մի սիրած էակ։ Այս կարեւոր խնդիրը Դուրեանի կեանքով հետաքրքրվողներին դեռ մինչեւ այժմ մութն է մնացել։ «Պիտաոը», որի մասին իր բանաստեղծութիւններից մէկում յիշվում է, Դուրեանի երգերը «սրբագրողի» երեւակայութեան պտուղն է միայն. իսկ «Սաթենիկի» պատմութիւնը, որի մասին տեղեկանում ենք պ. Զօպանեանի կազմած կենսագրութիւնից, իր բամանտիքական հիւսուածքով հանդերձ՝ այնքան էլ անհաւանական չէ։ Ի դէպ է նկատել, որ դա յիշեցնում է մեզ գերմանական նշանաւոր բամանտիք՝ Նովալիսի կեանքից մի էջ՝ նրա առաջին սէրը, որի առարկան էր Սոֆին։ Այսպէս թէ այնպէս, պ. Զօպանեանի հետ մենք էլ այն կարծիքին ենք, որ Դուրեանը հաւանօրէն մի սիրած, բայց մեզ մինչեւ այժմ անծանօթ մնացած էակ պէտք է ունեցած լինի՝ այլապէս նրա բանաստեղծութիւններից, այդ «գրված արտասուքներից»—ինչպէս անուանում է Լամարթին իր «առաջին վիշտը»—շատերը մեզ աներեւակայելի կը թուէին։ Զը մոռանանք նոյնպէս նկատել, որ եթէ երբ եւ էջէ դրականապէս ապացուցվի, որ Դուրեանը այդպիսի մի էակ չէ ունեցել՝ այն ժամանակ մեզ թուում է, որ հաւանօրէն, եթէ ոչ դրան իբրեւ մի փոխարինող միջոց (surrogat) դէթ մի մեծ խոչընդոտ եղել է այն ջերմ եւ հիւանդոտ սէրը, որ նա տածում էր դէպի իր մտերիմ եւ գաղափարակից ընկեր Վ. Լուֆֆեանը, որ ծաղիկ հասակում, Դուրեանի մահվանից մի քանի ամիս առաջ, նոյնպէս զոհ գնաց թոքախտի։ Մեր բանաստեղծը հիւանդութեան անկողնում ամենադառնագին հեկեկանքով ողբաց իր մտերիմի կորուստը. «իր յիշատակին վառարանն եմ, իր կսկիծին ովկեանը, իր սուգին վիհը, իր գերեզմանն եմ»։ Փոխանակ «պաղ» եւ «անզգայ» ծաղիկ սփռելու նրա թարմ գերեզմանի վրա՝ «հոգուց քամված» արցունք է թափում, «տաք եւ աղի»։ Այսպիսի բարեկամութեամբ, այսպիսի հոգեսեռական սիրով—որ ըստ իր էութեան միանդամայն բամանտիքական է—կապված էին եւ գերմանացի երկու յայտնի բամանտիկներ՝ Տիք եւ Վաքէնրոդէր. այդ սիրով համակված էր նաեւ իտալացի հռչակաւոր յոռետես քնարերգակ—Լէօպարտին։

Լամարթինի հետեւողութեամբ նա կոյս աղջկան համարում է «սրտի մեղու», որի ծծած ծաղիկը սիրան է, իսկ մեղրը՝ սէր, եւ ահա նա «ծաղիկների կոյս մայրիկից»—մայիսից—իր հոգու ծաղիկն է հայցում. եւ յիրաւի, կոյսի աչերը նրան «երկնային խունկ» են բուրվառում։ «Շողերու եւ բոյրերու այս թագուհին—«վերջալոյսի աղջիկը»՝ եթէ նայի—հիմա կը մարէ, եթէ ժպտի—հիմա կանցնի, եթէ շարժի—հիմա կը թռչի, եթէ չիկնի—հիմա կը բռնկի, իսկ եթէ մեռնի—հիմա կը ծնի»։

Վ. Նալբանդեան

(Կը շարունակվի)

դարձ բարեգործների անունն ու յիշատակը աւելի արժանավայել կերպով յարգվէր մեր մէջ. իսկ նրա կրկին որբացած որբերը—որոնց աչքերը դէպի հիւսիս է յառած—զուրկ չը մնային այն համեստ օժանդակութիւնից՝ որից կախված է իրանց կեանքն ու գոյութիւնը։

Ա. Վրոյր

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, օգոստոսի 1-ին

Որովհետեւ մի քանի տեղերից դիմում են ինձ, խնդրելով իմ «Մէլիքի Աղջիկը» վէպը, խնդրում եմ թոյլ տալ ինձ յայտարարել «Մշակի» միջոցով, որ այդ գիրքը սպառված է, հետեւաբար եւ ես չեմ կարող կատարել ինձ ուղղած պահանջները։

Լէօ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Կարզախ գիւղ, յուլիսի 23-ին

Խնդրում ենք մի անկիւն չնորհել այս երկտողին։ «Մշակ»-ի 154 համարում Ախալքալաքից գրված լուրը, տեղիս հոգեհացի սովորութիւնը փոխելու եւ նրա փոխարէն անբերրիութիւնից վնասվածների համար «բաւականաչափ» հացահատիկ հաւաքելու մասին, չափազանցրած է։ Ցիրաւի մեր կողմից քանի մի անգամ եղել են այդ մասին յորդորներ, բայց դարերով ժողովրդի մէջ արմատացած եւ նուիրական դարձած սովորութիւնը կարճ ժամանակվայ մէջ փոխել անհնար է։ Վնասված գիւղացիների օգտին հաւաքվել եւ իր ժամանակին ղրկվել է Վաչիան եւ Զանտուրա գիւղերը ընդամէնը 12 կօտ ցորեն եւ 8 կօտ գարի. իսկ արտաքոյ այդ քանի եղել են այստեղի ժողովրդից բազմաթիւ նուիրաբերութիւններ իրանց դիմողներին ինքնաբերաբար. բազմաթիւ անձինք, համարեա բոլորը վնասված գիւղերից, 5—10 կօտերով եւ մինչեւ անգամ սոմառներով ցորեն եւ գարի են տարել այս գիւղից, իբրեւ նուէր, եւ մինչեւ այսօր ոչ մէկից երես չէ դարձրել այս գիւղի ժողովուրդը։

Մարտիրոս քահանայ Աբովեան
Կ. ք. Ղազազեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են հետեւեալը. «Ինչպէս յայտնի է «Մշակի» ընթերցողներին, Թիֆլիսում թատերասէրներից կազմված էր մի փոքրիկ ընկերութիւն, որի նպատակն էր այս ամառվայ ընթացքում հանրամատչելի գներով շաբաթական երկու ներկայացում տալ ամառային ժողովրարանի դահլիճում։ Դժբաղդաբար, փոքրիկ ընկերութիւնը, ահա վեց շաբաթ է, ինչ չէ տալիս ներկայացում, որովհետեւ աջողութիւն չէ ունեցել մուտքի կողմից։ Թատրօն յաճախողը առիթ ունէր նեղանալու. ժողովարանի վարչութիւնը հարկադրում էր, որ թատրօն եկողները, բացի տոմսակի վճարից, տան առանձին, մուտքի համար 50 կոպէկ։ Սակայն այդ փոքրիկ ընկերութիւնը ինչու՞ աչքի առաջ չունէր այսպիսի հանգամանք։ Աւելի լաւ չէր լինի, որ մի որոշ գումար թատրօնի վարձ տար ժողովարանի վարչութեանը եւ այդպիսով վերանար առանձնապէս մուտքին 50 կոպէկ վճարելը։ Կամ աւելի լաւ չէր ներկայացումները ժողովարանից տեղափոխել ուրիշ տեղ, օրինակ, Վեռցելի թատրօնական դահլիճը։ Յուլիսի 29-ին տ. Զաբէլ տուեց ներկայացում պ. Աժօի հետ։ Այս անգամ վերացած էր մուտքի համար առանձին վճարը։ Խաղացին «Զոհի փոխարէն զոհ» կոմեդիան։ Ներկայացումը անցաւ բաւարար։ Ներկայացումից յետոյ տեղի ունեցաւ երաժշտական բաժին, մասնակցութեամբ ուսանող Խաչատրեանի, եւ զաւեշտ։ Զաւեշտը ամենից աջողն էր. մասնակցում էին պ.պ. Միրզոյեան եւ Բաբուրեան։ Պ. Միրզոյեանը կարդաց «Իսկ մեզանում ընդհակառակն» ոտանաւորը եւ բուռն ծափահարութեան արժանացաւ. պ. Բաբուրեան կարդաց «Թիֆլիսեցու յիշողութիւններից» եւ նոյնպիսի աջողութիւն ունեցաւ։ Թատրօնը ծայրէ ի ծայր լիքն էր հասարակութեամբ»։

—

Համեմատելով անցեալ տարիների հետ՝ այս տարի շատ աւելի մեծ քանակութեամբ խնդիրներ են տուած Պետերբուրգի բարձրագոյն դպրոցների վարչութիւններին։ Միայն տեխնոլոգիական ինստիտուտում ընդունված են 1000-ից աւելի խնդիրներ, թէպէտ եւ հրէաները ոչ մի խնդիր չեն տուել, որովհետեւ նրանց խնդիրները ամենեւին չեն ընդունվում այդ ինստիտուտում։ Նոյնչափ քանակութեամբ խնդիրներ տուած են եւ հաղորդակցութեան ճանապարհների ինստիտուտի վարչութեանը։ Մինչեւ անգամ անտառային ինստիտուտում, որ առհասարակ չէ գրաւում դէպի ինքը ուսանողների մեծ բազմութիւն, այս տարի ընդունված են խնդիրներ աւելի քան 500 անձերից։

—

Ուշադրութեան առնելով բազմաթիւ բողոքները՝ կառավարութիւնը մտադրութիւն ունի միջոցներ ձեռք առնել դադարեցնելու այն վնասակար սպեկուլեացիան, որ կատարվում է ներքին փոխառութեան խաղարկութեան տոմսերի միջոցով եւ որ վերջին ժամանակ ահագին չափեր է ստացել։ Այս նպատակով մտադրութիւն կայ, իբր, խաղարկութեան տոմսերի այժմեան թիւը դարձնել մշտական, այսինքն տիրաժ դուրս եկած տոմսերը փոխարինել նորերով։

—

Աչքի առաջ ունենալով ընթերցանութեան նշանակութիւնը, ժողովրդական լուսաւորու-

թեան մինիստրութիւնը ժառդրութիւն ունի կարճ ժամանակից յետոյ ձեռնաժուխ լինել վերաքննելու միջնակարգ դպրոցների աշակերտական գրադարաններին վերաբերեալ կանոնները եւ նրանց գրացուցակը։ Հաստատապէս յայտնի է, որ այդ գրացուցակները նշանաւոր չափով կընդարձակվեն եւ նրանց մէջ կը մտցնվեն այնպիսի գրուածքներ, որոնց պահել այդ գրադարաններում մինչեւ այժմ արգելված էր։

—

Ուրախութեամբ արձանագրում ենք, որ այժմ Ռուսաստանի զանազան մասերում եւ առանձնապէս հարաւային նահանգներում կազմված են առանձին գիւղատնտեսական ընկերութիւններ, որոնց նպատակն է աշխատել ամեն կերպ պահպանելու Ռուսաստանի անտառները ոչնչացումից. այս պատճառով էլ այդ ընկերութիւնները կրում են «անտառի բարեկամներ» անունը։ Առաջին երկու ընկերութիւնները քիչ ժամանակ առաջ կազմվեցին Ուրալի շրջանում եւ Եկատերինոսլավի նահանգում. ուրիշ երկու ընկերութիւն այժմ կազմվում են Խերսոնի եւ Սարատովի նահանգներում։ Բոլոր չորս ընկերութիւնների կանոնադրութիւններն էլ արդէն հաստատված են երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրից։

—

«Моск. Вѣд.» լրագիրը հաղորդում է, իբրեւ լուր, թէ գիմնազիաների եւ ռէալական ուսումնարանների աշակերտների հագուստի այժմեան ձեւը պէտք է փոխվի եւ սահմանվի մի ձեւի հագուստ երկու ուսումնարանների աշակերտների համար։ Նոր ձեւի հագուստը մտադրութիւն կայ պարտաւորական դարձնել երկու տարուց յետոյ միայն։

—

ՇՈՒՇՈՒԻՑ մեզ գրում են. «Նորերս բացվեց պ. Անանեանցի բաղանիքը, որ միակն է քաղաքի գոնէ հայ եւ ռուս ազգաբնակութեան համար։ Մի կողմից՝ շնորհակալութիւն յայտնելով պարոնին, որ նա մեզ միջոց տուեց այսուհետեւ փոքր ի չատէ մաքրակենցաղ լինելու, միւս կողմից՝ պարտք ենք համարում մատնացոյց անել պարոնի անհոգութեան վրա, որ հասնում է աններելիութեան աստիճանին։ Ամբողջ ժամերով անտէր թողնել բաղանիքը, նստեցնել այնտեղ իբրեւ պահապան եւ հսկող մի 10—12 տարեկան երեխայ, որ սովորում է թեմական դպրոցի առաջին դասարանում, պահել կեղտի մէջ թաղված ծառայ—լուացողներ, որոնք յաճախորդների հետ միասին հանվում են եւ հագնվում են մի եւ նոյն նախասենեակի մէջ, մի եւ նոյն խախտի վրա, եւ այլն,—ապացուցանում են, որ պարոնը, իր բաղնիքով մի մեծ ծառայութիւն արած լինելով հանդերձ՝ շատ քիչ է հսկանում իր գործը... Երբէք հաճելի բան չէ, երբ յաճախորդը օրը կէսօրին ժամերով նստում է բաղնիքում մի մանկահասակ աշակերտի հետ սպասողական դրութեան մէջ եւ, վերջ ի վերջոյ, լուացվելուց զզուանքով թողնում այդ մաքրավայրը։ Անհրաժեշտ է ուշադրութիւն եւ լաւ հսկողութիւն»։

—

ԳՕՐՈՒԻՑ մեզ գրում են. «Կիրակի, յուլիսի 29-ին, Մեկրիխեվ գիւղում կրօնափոխ եղաւ տեղացի մի հայ երիտասարդ»։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 19-ին Ղուբայի հաշտարար դատաւոր Սիմոն, քննելով կալուածատէր Նիկոլայ Կոլուբովի գործը, որը մեղադրվում էր Ալէքսանդր Կիրիլովին «սորիինինով» պատահմամբ սպանելու գործի մէջ, նրան յանցաւոր ճանաչեց եւ պատժեց՝ դատապարտելով երկու շաբաթ պոլիցիական բանտարկութեան եւ եկեղեցական ապաշխարանքի։ Իսկ գործի քաղաքացիական մասը հետեւեալ վճիռը ունեցաւ,—պահանջել յիշեալ Կոլուբովից յօգուտ սպանվածի մօր՝ Նադեժդա Կիրիլովայի երկու հազար բուբլի տասը տարվայ ընթացքում»։

—

ԱԶԱՑԻՆԷՆ գիւղից (Գէօկչայի գաւառ) մեզ գրում են. «Ինչ ցաւ ու կրակ ասէք, որ մեր գաւառը չը քաշեց այս տարի. երկարատեւ չորութիւններ, սոսկալի կարկուտ, վազերի զանազան հիւանդութիւններ, հացի բզէզ, մուկ, անասունների ժանտախտ եւ այլն եւ այլն։ Բարդեցէք այս բոլորը եւ կը ստանանք աղէտից մի բան էլ աւելի. ծերերը պատմում են, որ այսպիսի տարի իրանք չեն յիշում։ Մեր գաւառի արեւմտեան մասում դեռ չէ անցել ժանտախտը եւ շարունակ կոտորածներ է անում։ Գիրք գիւղն եւս ենթարկված է այդ դժբաղդութեանը։ Սարատից դողում է ամբողջ գաւառը. դաշտերի բերքերը դեռ չեն ժողովվել, կալ ու կալսելն էլ կիսատ է։ Թէ ինչով կը վերջանայ այս բոլորը—չը գիտենք։ Մեր գաւառի ամեն մի գիւղ, մանաւանդ Գիրքը, ունի Բագուում մի քանի հատ յայտնի հարուստներ, մի քանի միլիոնի տէրեր, մինիստրական ոռճիկներ ստացողներ, բայց սրտի ցաւով պէտք է ասել, որ մինչեւ այսօր ոչ մի հոգ չէ տարված խեղճ գիւղացու տնտեսական դրութիւնը թեթեւ չափով բարւոքելու մասին։ Մի բացառութիւն միայն. գիրքեցի պ. Ց. Կօրգանեան չինել է տալիս գիւղի եկեղեցին ամբողջապէս իր հաշւով, որի համար, ինչպէս լսեցինք, կտակել է 30—40 հազար բուբլի։ Հօր օրինակին հետեւել է ուսանող որդին—պ. Ալէքսանդր Կօրգանեան՝ իր վրա վերցնելով գիւղական երկդասեան դպրոցի կառուցման ծախսը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՑԻՑ

—

Բերլին, յուլիսի 25-ին

Բերլինի հայ ուսանողութիւնը

Եւրոպայի հայալսարանական քաղաքների շարքում Բերլինը երրորդ տեղն է բռնում, Պարիզից եւ Ժընէվից յետոյ, իր բազմամարդ հայ ուսանողութեամբ։ Անցեալ կիսամեակում այստեղի ուսանողների թիւը հասնում էր 36-ի, իսկ այժմ՝ 28-ի։

Հայ ուսանողներն ունեն եւ կազմակերպութիւն. նոյն իսկ մէկի տեղ երկուսը, այն է՝ «Հայ ուսանողների գրական ժողով», որտեղ կարդացվում են ամեն տեսակ դասախօսութիւններ, եւ «Հայ ուսանողական կրթական ժողով», որ իրան նպատակ է դրել մօտ ծանօթութիւն ձեռք բերել գլխաւորապէս հայկական պատմութեան, գրականութեան ու հայերի ներկայ դրութեան մասին։ Այդ մի եւ նոյն նպատակի համար «Կրթական ժողովը» հիմնել է նաեւ մի գրադարան, որի գոյութիւնն այնքան ցանկալի եւ օգտակար է։

«Գրական ժողովի» անդամների թիւը հասնում է 13-ի, որոնցից 10-ը դարաբաղցիներ են, իսկ մնացած 3-ը՝ շամախեցի, բագուեցի եւ թիֆլիսցի։

Գալով մասնագիտութիւններին, պէտք է ասել, որ ստուար մեծամասնութիւնը գործնական առարկաներ սովորողներ են։ Այսպէս՝ 1 օրիորդ—մանկավարժութիւն, 5 ուսանող—բժշկութիւն, 2—քիմիա, 2—գիւղատնտեսութիւն, 2—հասարակական գիտութիւններ եւ 1—հանքաբանութիւն։

Ուրեմն 13-ից միայն երեքն են հումանիտար առարկաներ սովորում։

Աւելորդ չի լինի նկատել, որ բացի օրիորդից, որ աւարտել է գիմնազիան, մնացածները գրեթէ բոլորն էլ ռէալական դպրոցներիցն են։ Կայ եւ մի համալսարանական։

Այժմ դառնանք միւս ժողովին, որ «Կրթական» անունն է կրում։ Դրա անդամների մէջ կան 3 օրիորդ եւ 1 տիկին։ Բոլոր անդամների թիւը հասնում է 15-ի, որոնք, ըստ ծննդավայրի, դասաւորվում են այսպէս՝ 3 նոր-նախիջեւանցի, 3 ալէքսանդրօպոլցի, 2 սատրախանցի, 2 ագուլիսցի, 1 թիֆլիսեցի, 1 շուլավերցի, 1 գանձակեցի, 2 շամախեցի։

Դրանք սովորում են՝ հասարակական գիտութիւններ՝ 5 հոգի, հոգեբանութիւն՝ 1, մանկավարժութիւն՝ 1, պատմութիւն՝ 1, լեզուագիտութիւն՝ 2, բժշկութիւն 3, գիւղատնտեսութիւն՝ 2։

Գալով դրանց կրթական ցէնզին, պէտք է նկատել, որ 3-ը Ռուսաստանի հանալսարանարտներ են, 1-ը Պետերբուրգի բարձրագոյն կուրսերից, 1-ը կօնսերվատորիայից, 1-ը ուսուցչական ինստիտուտից, 1-ը Լազարեան ճեմարանից, իսկ մնացածները միջնակարգ կրթութիւն են ստացել գիմնազիաներում եւ ռէալական ու Ներսիսեան դպրոցներում։

Բացատրութիւններն աւելորդ են։ Առաջ բերած վիճակագրական տեղեկութիւնները որոշ չափով կարող են պարզել, թէ այդ երկու ժողովներից իւրաքանչիւրն ինչ գոյն ունի եւ թէ ինչ տարբերութիւն կայ նրանց մէջ։ Նկատենք միայն, որ երկրորդ, այսինքն «Կրթական» ժողովը կազմակերպվեց գլխաւորապէս այն պատճառով, որ մի զարաբաղցի ուսանող մի շարք զեղծումներ ու կողոպտութիւններ կատարելուց յետոյ՝ չուզեց մարդավայել միջոցով իր արատաւորված պատիւը մաքրել (ի հարկէ, եթէ կարող էր)—եւ գրական ժողովը դարձրեց լուսանքների եւ բռունցքների ապարէզ...

Ե. Թ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Politishe Correspondenz» լրագրի Կ. Գօլսի թղթակիցը ասում է, թէ «Բաղդադի երկաթուղի» անունը, որ տուած է գերմանացի եւ ֆրանսիացի դրամատէրերի միջոցով փոքր-Ասիայում չինվելիք երկաթուղային գծին, ուղիղ չէ, որովհետեւ այն գիծը, որ պէտք է միացնէ Կ. Գօլիսը Բաղդադի հետ, մի ճիւղն է միայն այն մեծ ճանապարհի, որ մի կողմից պէտք է գնայ դէպի Պարսից ծոցը, իսկ միւս կողմից՝ Պարսկաստանի եւ Աւղանիստանի միջով դէպի Հնդկաստան։ Հնդկաստանում նոր գիծը կը միանայ այն գծերին, որոնք արդէն գոյութիւն ունեն այնտեղ։ Այս հսկայական ծրագրի իրագործումը միայն ժամանակի հարց է։ Ցամենայն դէպս այդ ճանապարհը ահագին նշանակութիւն կունենայ, որովհետեւ Եւրոպան կը միացնէ հեռաւոր Արեւելքի հետ ամենաուղիղ եւ ամենարնական ճանապարհով։

—Գերմանական Վիկտորիա թագուհին, որի կեանքը վերջին ամիսների ընթացքում տանջանքների մի ամբողջ շարք էր ներկայացնում, ազատվեց նրանցից,—ինչպէս երեւում է գերմանական մամուլի մէջ երեւեցած նկարագրութիւններից,—երեք օր մահվանից առաջ։ Երկուշաբթի առաւօտեան, երբ Վիլհելմ կայսրը եւ Վիկտորիա-Աւգուստ կայսրուհին մտան հիւանդի սենեակը, նա դեռ կատարեալ գիտակցութեան մէջ էր եւ ձեռքով ողջունեց որդուն եւ հարսին։ Մի քիչ յետոյ հիւանդը առ ժամանակ կորցրեց գիտակցութիւնը, բայց շուտով այնքան ուշքի եկաւ, որ կարողացաւ ընդունել անգլիական եկեղեցու քահանային, որ եւ մնաց կայսրուհու մօտ մի ժամ։ Կէսօրից յետոյ կայսրուհին նորից սկսեց շուտ-շուտ ուշաթափվել, բայց ուշաթափութիւնը տեւում էր շատ կարճ։ Կէսօրին, երբ կարճատեւ ճաշից յետոյ կայսերական զոյգը վերադարձաւ հիւանդի սենեակը, նրա ոյժերը սկսեցին արագութեամբ նուազել, իսկ ժամի 6-ին կայսրուհին արդէն հոգեվարքի մէջ էր։ Ժամի 6-ին եւ 27 րոպէին պրոֆէսսոր Բանվէրս ասաց կայսրին, որ նրա մօր սիրտը դադարեց բաբախելուց։ Անգլիացի քահանան աղօթք կարդաց եւ կայսերական ընտանիքի բոլոր անդամները հրաժեշտի ողջոյն տուին հանգուցեալին, որի սառչող ձեռքերի մէջ դրին ոսկեայ շուշաններ։ Ֆրիդրիխսհոֆ պալատը, կայսրուհու մահվանից անմիջապէս յետոյ, ամեն կողմից շրջապատվեց ժանդարմներով եւ հետեւակ զինուորներից կազմված պահակախմբերին բաժանվեցին փամփուշտներ եւ հրաման տրվեց հրացանի բռնել ամեն մէկին, ով կաշխատի մտնել պալատը։

—Դիարբէքիրից գրում են «Սաադէտ» լրագրին, թէ քրդական Միլլի եւ Կարա-Կէչի ցեղերի մէջ շարունակվող արիւնհեղութիւնների պատճառով, 17 գիւղերի բնակիչները, որոնք գտնվում են քրդական կոիների շրջանում, թողել են իրանց բնակարանները եւ փախել զանազան կողմեր՝ երկիւղ կրելով քրդական կոտորածից։ Բնակիչներից թողնված բնակարանները գրաւել են քրդերը։

—«Սաբահ» լրագրին գրում են, թէ երբ Դիարբէքիրի վալին շրջում էր իր վիլայէթում, Մարդինի բանտում բանտարկված 173 հայերից խնդիր ստացաւ, որի մէջ նրանք յայտնում են, թէ ահա չորս տարի է, որ նրանք բանտարկված են, բայց չը գիտեն բանտարկութեան պատճառը եւ չեն ենթարկված ոչ մի անգամ դատաստանական հարց ու փորձի։ Քննելով խնդիրը, վալին գտաւ, որ այդ 173 բանտարկվածները զոհ են դարձել մի ցաւալի թիւրիմացութեան», ուստի եւ հրամայեց արձակել նրանց բանտից։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

31 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Օրէնսդրութիւնների ժողովածուի» մէջ հրատարակված են կանոններ պետական 4% բենատի 14 նոր սերիաների հրատարակութեան մասին։

Յուլիսի 30-ին Ռէվէլ հասաւ Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ։

Յուլիսի 31-ին Պետրոս-Պօղոսի աւետարանական-բողոքական եկեղեցում հոգեհանգստեան ժամասացութիւն կատարվեց գերմանական հանգուցեալ այրի կայսրուհի Վիկտորիայի համար։ Ներկայ էին Թագաւոր կայսրը, Թագուհի կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնա, հելլէնական թագուհին իր որդու՝ արքայորդի Անդրէյի հետ, Մէկլէնբուրգ-Շվէդինեան այրի դքսուհին, Մեծ-Իշխանները եւ Մեծ-Իշխանուհիները։

ԿԱԶԱՆ։ Երկու շաբաթ է, որ անձրեւ չէ եկել. շոքը հասնում է 40 աստիճանի. օդը չափազանց չոր է։ Անտառային եւ տօրֆի հրդեհներից այնպիսի ծուխ է կանգնած, որ ծածկում է արեւը։ Ծառերի տերեւներն սկսել են թափվել։

ԿԻԵՎ։ Ոստիկանութիւնը գտել է մի գիւղացի կին, Պրուսենկովա անունով, որ պարապում էր լով՝ պետական կանցլերը յուլիսի 30-ին երկաթեան մինիստրութիւնը ժառդրութիւն ունի կարճ ժամանակից յետոյ ձեռնաժուխ լինել վերաքննելու միջնակարգ դպրոցների աշակերտական գրադարաններին վերաբերեալ կանոնները եւ նրանց գրացուցակը։ Հաստատապէս յայտնի է, որ այդ գրացուցակները նշանաւոր չափով կընդարձակվեն եւ նրանց մէջ կը մտցնվեն այնպիսի գրուածքներ, որոնց պահել այդ գրադարաններում մինչեւ այժմ արգելված էր։

—

Ուրախութեամբ արձանագրում ենք, որ այժմ Ռուսաստանի զանազան մասերում եւ առանձնապէս հարաւային նահանգներում կազմված են առանձին գիւղատնտեսական ընկերութիւններ, որոնց նպատակն է աշխատել ամեն կերպ պահպանելու Ռուսաստանի անտառները ոչնչացումից. այս պատճառով էլ այդ ընկերութիւնները կրում են «անտառի բարեկամներ» անունը։ Առաջին երկու ընկերութիւնները քիչ ժամանակ առաջ կազմվեցին Ուրալի շրջանում եւ Եկատերինոսլավի նահանգում. ուրիշ երկու ընկերութիւն այժմ կազմվում են Խերսոնի եւ Սարատովի նահանգներում։ Բոլոր չորս ընկերութիւնների կանոնադրութիւններն էլ արդէն հաստատված են երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրից։

—

«Моск. Вѣд.» լրագիրը հաղորդում է, իբրեւ լուր, թէ գիմնազիաների եւ ռէալական ուսումնարանների աշակերտների հագուստի այժմեան ձեւը պէտք է փոխվի եւ սահմանվի մի ձեւի հագուստ երկու ուսումնարանների աշակերտների համար։ Նոր ձեւի հագուստը մտադրութիւն կայ պարտաւորական դարձնել երկու տարուց յետոյ միայն։

—

ՇՈՒՇՈՒԻՑ մեզ գրում են. «Նորերս բացվեց պ. Անանեանցի բաղանիքը, որ միակն է քաղաքի գոնէ հայ եւ ռուս ազգաբնակութեան համար։ Մի կողմից՝ շնորհակալութիւն յայտնելով պարոնին, որ նա մեզ միջոց տուեց այսուհետեւ փոքր ի չատէ մաքրակենցաղ լինելու, միւս կողմից՝ պարտք ենք համարում մատնացոյց անել պարոնի անհոգութեան վրա, որ հասնում է աններելիութեան աստիճանին։ Ամբողջ ժամերով անտէր թողնել բաղանիքը, նստեցնել այնտեղ իբրեւ պահապան եւ հսկող մի 10—12 տարեկան երեխայ, որ սովորում է թեմական դպրոցի առաջին դասարանում, պահել կեղտի մէջ թաղված ծառայ—լուացողներ, որոնք յաճախորդների հետ միասին հանվում են եւ հագնվում են մի եւ նոյն նախասենեակի մէջ, մի եւ նոյն խախտի վրա, եւ այլն,—ապացուցանում են, որ պարոնը, իր բաղնիքով մի մեծ ծառայութիւն արած լինելով հանդերձ՝ շատ քիչ է հսկանում իր գործը... Երբէք հաճելի բան չէ, երբ յաճախորդը օրը կէսօրին ժամերով նստում է բաղնիքում մի մանկահասակ աշակերտի հետ սպասողական դրութեան մէջ եւ, վերջ ի վերջոյ, լուացվելուց զզուանքով թողնում այդ մաքրավայրը։ Անհրաժեշտ է ուշադրութիւն եւ լաւ հսկողութիւն»։

—

ԳՕՐՈՒԻՑ մեզ գրում են. «Կիրակի, յուլիսի 29-ին, Մեկրիխեվ գիւղում կրօնափոխ եղաւ տեղացի մի հայ երիտասարդ»։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 19-ին Ղուբայի հաշտարար դատաւոր Սիմոն, քննելով կալուածատէր Նիկոլայ Կոլուբովի գործը, որը մեղադրվում էր Ալէքսանդր Կիրիլովին «սորիինինով» պատահմամբ սպանելու գործի մէջ, նրան յանցաւոր ճանաչեց եւ պատժեց՝ դատապարտելով երկու շաբաթ պոլիցիական բանտարկութեան եւ եկեղեցական ապաշխարանքի։ Իսկ գործի քաղաքացիական մասը հետեւեալ վճիռը ունեցաւ,—պահանջել յիշեալ Կոլուբովից յօգուտ սպանվածի մօր՝ Նադեժդա Կիրիլովայի երկու հազար բուբլի տասը տարվայ ընթացքում»։

—

ԱԶԱՑԻՆԷՆ գիւղից (Գէօկչայի գաւառ) մեզ գրում են. «Ինչ ցաւ ու կրակ ասէք, որ մեր գաւառը չը քաշեց այս տարի. երկարատեւ չորութիւններ, սոսկալի կարկուտ, վազերի զանազան հիւանդութիւններ, հացի բզէզ, մուկ, անասունների ժանտախտ եւ այլն եւ այլն։ Բարդեցէք այս բոլորը եւ կը ստանանք աղէտից մի բան էլ աւելի. ծերերը պատմում են, որ այսպիսի տարի իրանք չեն յիշում։ Մեր գաւառի արեւմտեան մասում դեռ չէ անցել ժանտախտը եւ շարունակ կոտորածներ է անում։ Գիրք գիւղն եւս ենթարկված է այդ դժբաղդութեանը։ Սարատից դողում է ամբողջ գաւառը. դաշտերի բերքերը դեռ չեն ժողովվել, կալ ու կալսելն էլ կիսատ է։ Թէ ինչով կը վերջանայ այս բոլորը—չը գիտենք։ Մեր գաւառի ամեն մի գիւղ, մանաւանդ Գիրքը, ունի Բագուում մի քանի հատ յայտնի հարուստներ, մի քանի միլիոնի տէրեր, մինիստրական ոռճիկներ ստացողներ, բայց սրտի ցաւով պէտք է ասել, որ մինչեւ այսօր ոչ մի հոգ չէ տարված խեղճ գիւղացու տնտեսական դրութիւնը թեթեւ չափով բարւոքելու մասին։ Մի բացառութիւն միայն. գիրքեցի պ. Ց. Կօրգանեան չինել է տալիս գիւղի եկեղեցին ամբողջապէս իր հաշւով, որի համար, ինչպէս լսեցինք, կտակել է 30—40 հազար բուբլի։ Հօր օրինակին հետեւել է ուսանող որդին—պ. Ալէքսանդր Կօրգանեան՝ իր վրա վերցնելով գիւղական երկդասեան դպրոցի կառուցման ծախսը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՑԻՑ

—

Բերլին, յուլիսի 25-ին

Բերլինի հայ ուսանողութիւնը

Եւրոպայի հայալսարանական քաղաքների շարքում Բերլինը երրորդ տեղն է բռնում, Պարիզից եւ Ժընէվից յետոյ, իր բազմամարդ հայ ուսանողութեամբ։ Անցեալ կիսամեակում այստեղի ուսանողների թիւը հասնում էր 36-ի, իսկ այժմ՝ 28-ի։

Հայ ուսանողներն ունեն եւ կազմակերպութիւն. նոյն իսկ մէկի տեղ երկուսը, այն է՝ «Հայ ուսանողների գրական ժողով», որտեղ կարդացվում են ամեն տեսակ դասախօսութիւններ, եւ «Հայ ուսանողական կրթական ժողով», որ իրան նպատակ է դրել մօտ ծանօթութիւն ձեռք բերել գլխաւորապէս հայկական պատմութեան, գրականութեան ու հայերի ներկայ դրութեան մասին։ Այդ մի եւ նոյն նպատակի համար «Կրթական ժողովը» հիմնել է նաեւ մի գրադարան, որի գոյութիւնն այնքան ցանկալի եւ օգտակար է։

«Գրական ժողովի» անդամների թիւը հասնում է 13-ի, որոնցից 10-ը դարաբաղցիներ են, իսկ մնացած 3-ը՝ շամախեցի, բագուեցի եւ թիֆլիսցի։

Գալով մասնագիտութիւններին, պէտք է ասել, որ ստուար մեծամասնութիւնը գործնական առարկաներ սովորողներ են։ Այսպէս՝ 1 օրիորդ—մանկավարժութիւն, 5 ուսանող—բժշկութիւն, 2—քիմիա, 2—գիւղատնտեսութիւն, 2—հասարակական գիտութիւններ եւ 1—հանքաբանութիւն։

Ուրեմն 13-ից միայն երեքն են հումանիտար առարկաներ սովորում։

Աւելորդ չի լինի նկատել, որ բացի օրիորդից, որ աւարտել է գիմնազիան, մնացածները գրեթէ բոլորն էլ ռէալական դպրոցներիցն են։ Կայ եւ մի համալսարանական։

Այժմ դառնանք միւս ժողովին, որ «Կրթական» անունն է կրում։ Դրա անդամների մէջ կան 3 օրիորդ եւ 1 տիկին։ Բոլոր անդամների թիւը հասնում է 15-ի, որոնք, ըստ ծննդավայրի, դասաւորվում են այսպէս՝ 3 նոր-նախիջեւանցի, 3 ալէքսանդրօպոլցի, 2 սատրախանցի, 2 ագուլիսցի, 1 թիֆլիսեցի, 1 շուլավերցի, 1 գանձակեցի, 2 շամախեցի։

Դրանք սովորում են՝ հասարակական գիտութիւններ՝ 5 հոգի, հոգեբանութիւն՝ 1, մանկավարժութիւն՝ 1, պատմութիւն՝ 1, լեզուագիտութիւն՝ 2, բժշկութիւն 3, գիւղատնտեսութիւն՝ 2։

Գալով դրանց կրթական ցէնզին, պէտք է նկատել, որ 3-ը Ռուսաստանի հանալսարանարտներ են, 1-ը Պետերբուրգի բարձրագոյն կուրսերից, 1-ը կօնսերվատորիայից, 1-ը ուսուցչական ինստիտուտից, 1-ը Լազարեան ճեմարանից, իսկ մնացածները միջնակարգ կրթութիւն են ստացել գիմնազիաներում եւ ռէալական ու Ներսիսեան դպրոցներում։

Բացատրութիւններն աւելորդ են։ Առաջ բերած վիճակագրական տեղեկութիւնները որոշ չափով կարող են պարզել, թէ այդ երկու ժողովներից իւրաքանչիւրն ինչ գոյն ունի եւ թէ ինչ տարբերութիւն կայ նրանց մէջ։ Նկատենք միայն, որ երկրորդ, այսինքն «Կրթական» ժողովը կազմակերպվեց գլխաւորապէս այն պատճառով, որ մի զարաբաղցի ուսանող մի շարք զեղծումներ ու կողոպտութիւններ կատարելուց յետոյ՝ չուզեց մարդավայել միջոցով իր արատաւորված պատիւը մաքրել (ի հարկէ, եթէ կարող էր)—եւ գրական ժողովը դարձրեց լուսանքների եւ բռունցքների ապարէզ...

Ե. Թ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Politishe Correspondenz» լրագրի Կ. Գօլսի թղթակիցը ասում է, թէ «Բաղդադի երկաթուղի» անունը, որ տուած է գերմանացի եւ ֆրանսիացի դրամատէրերի միջոցով փոքր-Ասիայում չինվելիք երկաթուղային գծին, ուղիղ չէ, որովհետեւ այն գիծը, որ պէտք է միացնէ Կ. Գօլիսը Բաղդադի հետ, մի ճիւղն է միայն այն մեծ ճանապարհի, որ մի կողմից պէտք է գնայ դէպի Պարսից ծոցը, իսկ միւս կողմից՝ Պարսկաստանի եւ Աւղանիստանի միջով դէպի Հնդկաստան։ Հնդկաստանում նոր գիծը կը միանայ այն գծերին, որոնք արդէն գոյութիւն ունեն այնտեղ։ Այս հսկայական ծրագրի իրագործումը միայն ժամանակի հարց է։ Ցամենայն դէպս այդ ճանապարհը ահագին նշանակութիւն կունենայ, որովհետեւ Եւրոպան կը միացնէ հեռաւոր Արեւելքի հետ ամենաուղիղ եւ ամենարնական ճանապարհով։

—Գերմանական Վիկտորիա թագուհին, որի կեանքը վերջին ամիսների ընթացքում տանջանքների մի ամբողջ շարք էր ներկայացնում, ազատվեց նրանցից,—ինչպէս երեւում է գերմանական մամուլի մէջ երեւեցած նկարագրութիւններից,—երեք օր մահվանից առաջ։ Երկուշաբթի առաւօտեան, երբ Վիլհելմ կայսրը եւ Վիկտորիա-Աւգուստ կայսրուհին մտան հիւանդի սենեակը, նա դեռ կատարեալ գիտակցութեան մէջ էր եւ ձեռքով ողջունեց որդուն եւ հարսին։ Մի քիչ յետոյ հիւանդը առ ժամանակ կորցրեց գիտակցութիւնը, բայց շուտով այնքան ուշքի եկաւ, որ կարողացաւ ընդունել անգլիական եկեղեցու քահանային, որ եւ մնաց կայսրուհու մօտ մի ժամ։ Կէսօրից յետոյ կայսրուհին նորից սկսեց շուտ-շուտ ուշաթափվել, բայց ուշաթափութիւնը տեւում էր շատ կարճ։ Կէսօրին, երբ կարճատեւ ճաշից յետոյ կայսերական զոյգը վերադարձաւ հիւանդի սենեակը, նրա ոյժերը սկսեցին արագութեամբ նուազել, իսկ ժամի 6-ին կայսրուհին արդէն հոգեվարքի մէջ էր։ Ժամի 6-ին եւ 27 րոպէին պրոֆէսսոր Բանվէրս ասաց կայսրին, որ նրա մօր սիրտը դադարեց բաբախելուց։ Անգլիացի քահանան աղօթք կարդաց եւ կայսերական ընտանիքի բոլոր անդամները հրաժեշտի ողջոյն տուին հանգուցեալին, որի սառչող ձեռքերի մէջ դրին ոսկեայ շուշաններ։ Ֆրիդրիխսհոֆ պալատը, կայսրուհու մահվանից անմիջապէս յետոյ, ամեն կողմից շրջապատվեց ժանդարմներով եւ հետեւակ զինուորներից կազմված պահակախմբերին բաժանվեցին փամփուշտներ եւ հրաման տրվեց հրացանի բռնել ամեն մէկին, ով կաշխատի մտնել պալատը։

—Դիարբէքիրից գրում են «Սաադէտ» լրագրին, թէ քրդական Միլլի եւ Կարա-Կէչի ցեղերի մէջ շարունակվող արիւնհեղութիւնների պատճառով, 17 գիւղերի բնակիչները, որոնք գտնվում են քրդական կոիների շրջանում, թողել են իրանց բնակարանները եւ փախել զանազան կողմեր՝ երկիւղ կրելով քրդական կոտորածից։ Բնակիչներից թողնված բնակարանները գրաւել են քրդերը։

—«Սաբահ» լրագրին գրում են, թէ երբ Դիարբէքիրի վալին շրջում էր իր վիլայէթում, Մարդինի բանտում բանտարկված 173 հայերից խնդիր ստացաւ, որի մէջ նրանք յայտնում են, թէ ահա չորս տարի է, որ նրանք բանտարկված են, բայց չը գիտեն բանտարկութեան պատճառը եւ չեն ենթարկված ոչ մի անգամ դատաստանական հարց ու փորձի։ Քննելով խնդիրը, վալին գտաւ, որ այդ 173 բանտարկվածները զոհ են դարձել մի ցաւալի թիւրիմացութեան», ուստի եւ հրամայեց արձակել նրանց բանտից։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

31 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Օրէնսդրութիւնների ժողովածուի» մէջ հրատարակված են կանոններ պետական 4% բենատի 14 նոր սերիաների հրատարակութեան մասին։

Յուլիսի 30-ին Ռէվէլ հասաւ Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ։

Յուլիսի 31-ին Պետրոս-Պօղոսի աւետարանական-բողոքական եկեղեցում հոգեհանգստեան ժամասացութիւն կատարվեց գերմանական հանգուցեալ այրի կայսրուհի Վիկտորիայի համար։ Ներկայ էին Թագաւոր կայսրը, Թագուհի կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնա, հելլէնական թագուհին իր որդու՝ արքայորդի Անդրէյի հետ, Մէկլէնբուրգ-Շվէդինեան այրի դքսուհին, Մեծ-Իշխանները եւ Մեծ-Իշխանուհիները։

ԿԱԶԱՆ։ Երկու շաբաթ է, որ անձրեւ չէ եկել. շոքը հասնում է 40 աստիճանի. օդը չափազանց չոր է։ Անտառային եւ տօրֆի հրդեհներից այնպիսի ծուխ է կանգնած, որ ծածկում է արեւը։ Ծառերի տերեւներն սկսել են թափվել։

ԿԻԵՎ։ Ոստիկանութիւնը գտել է մի գիւղացի կին, Պրուսենկովա անունով, որ պարապում էր ծծկեր երեխաների վերցնելով կերակրելու եւ մեծացնելու։ Գտնված է մի նիհար, մեռած երեխայ։ Հաստատված է, որ նրա մօտ մի քանի երեխաներ են մեռել ուժասպառ լինելուց։ Այս մասին քննութիւն է կատարվում։

ՄՕՍԿՎԱ։ Մոսկվա-Կուրսկ երկաթուղու ապրանքային կայարանում այրվեցին մինչ 4000 պուդ նաւթ, նաւթամբարը, չոգեշարժ մեքենան եւ չոգեմեքենաների վեց հատ կանգնելու տեղերը։ Վնասը 30,000 բուբլուց աւելի է. պատճառը տրաքված նաւթաչափ ապակին է։

ԼՕՆԴՕՆ։ Կիտչեներ հեռագրում է Պրետորիայից. «Ես հնարաւորութիւն ունիմ հաղորդելու ամենամեծ ցուցակը, որ մինչեւ այժմ եղել է մի շաբաթվայ ընթացքում։ Յուլիսի 23-ին զօրքերը հաղորդեցին, թէ սպանվել են 39 բօէրներ, վիրաւորվել են 20-ը, 785-ը գերի են ընկել եւ 85 հոգի իրանք են անձնատուր եղել։ Աւար են առնված 244,000 փամփուշտներ, 754 սայլեր, 5,580 ձիեր, 33,000 գլուխ եղջիւրաւոր անասուններ եւ մեծ քանակութիւն ուրիշ անասուններ։ Այս աւարի մեծ մասը առնված է Օրանժեան հանրապետութեան մէջ։—Ապա Կիտչեներ հաղորդում է, թէ Նաբուսմպրոյտի մօտ, այն գծի վրա, որ տանում է Պիտերսբուրգ, մի գնացք յուլիսի 28-ին դուրս է ձգված բէլոներից բօէրների ձեռքով. այդ ժամանակ երկու անգլիացի թեթեւ կերպով վիրաւորված են, սպանված է մի գերի բօէր եւ վիրաւորված են երկու անգլիացի փախստականներ։ Երբ հասաւ զրահապատ գնացքը, յարձակումն գործվեց թշնամու վրա, որի ժամանակ թշնամին կորցրեց 8 սպանված եւ 2 վիրաւորված։ Գնդապետ Կեկեվիչ Մէսսալական լեռներում գերի վերցրեց 40 հոգու, որոնց մէջ է եւ Վոլմարանս, ազգային առաջին ժողովի նախկին նախագահը։—Գեներալ Ֆրէնչի զօրքերը Կապի գաղթականութեան մէջ աստիճանաբար յետ են մղում թշնամու խմբերը դէպի հիւսիս։

ՇԱՆԳՀԱԻ։ Հայպուտանեան գունդը ուղեւորվեց դէպի Հօնգկօնգ փոխարինելու այն բատալիօնին, որ վերադառնում է Հնդկաստան։ Բրիտանական զօրքերից այժմ Շանգհայում մնացել է միայն բէլուջների մի գուն

բաւեւ խորհրդակցութիւն ունեցաւ ռուսաց դեսպանի հետ։

ԲՈՒԴԱՊԵՇՏ։ Ռուսական զինուորական օդապարիկը, որ իջել էր Ցէպպլինի կոմիտաու